

* * *

Նյու-Յորքի մի շարք հայկական միություններ կազմակերպել են հիշատակահանդես՝ նվիրված ապրիլյան եղեռնի 55-րդ տարեդարձին:

«Ջահակիր», 14 մայիսի

* * *

Բոստոնի հայ համայնքը ապրիլի 26-ին կազմակերպել է հուշատոն՝ նվիրված մեծ եղեռնի 55-ամյակին:

«Լրաբեր», 23 մայիսի

Ն. ՎԱՐԳԱՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

P. CHARANIS, Ph. D., *The Armenians in the Byzantine Empire*, Galoust Gulbenkian Foundation Armenian Library, Lisboa, 63 p.

«Հայերը Բյուզանդական կայսրությունում» գիրքը լույս է ընծայվել Դ. Կյուլբենկյանի հիմնարկության շնորհիվ՝ Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պատմության պրոֆեսոր, դասախոս Պ. Չարանիսը գրքի առաջաբանում ասում է. «Այս գիրքը ուսումնասիրում է Բյուզանդիայում իշխանության գլուխ անցած հայկական գինաստիայի պատմությունը, որը «մեծ ներդրում է ունեցել բյուզանդական կուլտուրայի զարգացման գործում»:

Դրքի ներածականը գրել է Սիրարփի Տեր-Ներսեսյանը: Նա հակիրճ խոսում է հայկական կամ մակեդոնական գինաստիայի մասին, ցույց

տալով նրա պատմական գերը բյուզանդական կայսրության մեջ: «Այս հետաքրքիր և գիտական աշխատությունը, — կարդում ենք ներածականում, — պրոֆ. Չարանիսի կողմից օգտակար ծառայություն կմատուցի հայկական գինաստիայի ուսումնասիրման գործին»: Հեղինակը քննական մոտեցում ունի պատմական այս կնճոռ հարցին, ուղեցույց ունենալով հունական, հայկական, արաբական և ասորական բազմաթիվ սկզբնաղբյուրներ և հարյուրավոր պատմական աշխատություններ: Դրքի վերջում կա շատ արժեքավոր բիբլիոգրաֆիա, որը կազմել է հեղինակի աշակերտ Դին Միլլերը:

JOHN CARSWELL, *New Julfa. The Armenian Churches and other Buildings*. Clarendon Press Oxford, 1968, 100 p. VIII—XV and 96 plates.

«Նոր Զուլֆայի հայկական եկեղեցիները և ուրիշ շինությունները» աշխատությունը Նոր Զուլայի հայկական եկեղեցիները ուսումնասիրելու առաջին փորձն է անգլերեն: Այդ հիանալի ճարտարապետական կոթողները կառուցվել են հայ առևտրականների կողմից 1606—1728 թթ.:

Դրքը բաղկացած է ներածականից, առաջաբանից, երեք գլուխներից, հավելվածից, բիբլիոգրաֆիայից և 96 լուսանկարից: «Այս աշխատության հիմնական նպատակն է, — իր ներածականում ասում է հեղինակը, — ուսումնասիրել և հետազոտել Զուլֆայի պատմա-ճարտարա-

պետական հույակապ կոթողները»: Զոն Կարդուիլը տվել է հայկական զաղութի պատմությունը, նրա կարևոր պատմական գերը համաշխարհային առևտրի մեջ: Դրքում ներկայացված է յուրաքանչյուր եկեղեցու պատմությունը, հատկազգիծը և մի քանի լուսանկարներ: Կան նաև ուսումնասիրություններ որմնանկարների մասին: Հավելվածում զետեղված են ճանապարհորդների հուշերն ու հիշատակությունները հայ բնակչության մասին: Այստեղ տարբեր լեզուներով կարդում ենք հայերի սովորույթների, նիստ ու կացի, բարքերի և զգեստների մասին:

E. MICHLE STONE. *The Testament of Levi*. A first study of the armenian MSS of the testaments of the XII patriarchs in the convent of St. James (With text, critical appartus, notes and translation), Printed and published by St. James Press, The Armenian Patriarchate, Jerusalem, May 1969, 203 p.

Ե. Մ. Ստոնի «Կտակ Ղեւեայ» գիրքը առաջին ցիտական ուսումնասիրությունն է նրուաղեմի ս. Հակոբ վանքի մատենադարանում գտնվող 12 առաքյալների կտակարանների ձեռագրերի մասին:

Երկը բաղկացած է առաջաբանից, 3 մասից, 2 հավելվածից և 5 ինդեքսից: Ե. Ստոնը առաջաբանում գրում է. «Հայկական ձեռագրերը բացառիկ նշանակություն ունեն համաշխարհային մատենագիտության համար: Ներկա աշխատու-

թյունը երկու նպատակ է հետապնդում. ա) լայն քաղաքացիություններ տալ հայկական ձեռագրերի մասին, որոնք գտնվում են Երուսաղեմի ս. Հակոբ վանքի գրադարանում, բ) ապացուցել, որ հայկական ձեռագրերը անգնահատելի են և ունեն իրենց արժանավայել տեղը համաշխարհային մասշտաբով: Երկի առաջին մասում Ստոնը խոսում է առաքյալների կտակարանների հայերեն ձեռագրի նշանակության մասին՝ համեմատելով հունականի հետ, ձեռագրերի յուրահատկությունների և փոխաբերությունների, համառոտագրությունների և հետազոտման մեթոդների մասին: Երկրորդ և երրորդ մասերում հեղինակը զետեղել է «Կտակ Ղևուկայ» հայերեն տեքստի «ա» և «բ» օրինակները անգլերեն թարգմանու-

թյամբ և բացատրություններով ու ծանոթագրություններով: Աշխատության առաջին հավելվածում Ստոնը տալիս է հավելյալ մեկնաբանություններ առաջարանի, «ա» և «բ» տեքստերի շուրջը: Երկրորդ հավելվածում խոսում է այն մասին, որ 1850 թ. Կալկաթայի «Ազգասեր Արարատյան» հայալեզու հանդեսում լույս է ընծայվել Ռուբենի, Շմավոնի և Ղևուկտակարանների ձեռագիրը: Այնուհետև գրքում զետեղված են երեք կտակարանների տեքստերը հայերեն լեզվով:

Գրքի վերջում կան հինգ ինդեքս՝ հատուկ անունները «ա» և «բ» օրինակներում, հունարեն բառերի ինդեքս կրկնվող տարբերակներով և ընդհանուր ինդեքս:

ՍԻՄՈՆՅԱՆ Գ. Յ., Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, Վենետիկ, 1966, 1036 էջ, նկարագարող:

Հայ մատենագիտության ու մշակույթի պատմության մեջ ուշագրավ և պատվավոր տեղ են գրավում հայկական բնակավայրերին նվիրված հուշամատյանները, որոնք հարստացնում են հայ պատմագիտության և ազգագրության գանձարանը: Ներկա աշխատությունը այդ գրքերի շարքից է:

Երկը բաղկացած է ներածականից, առաջաբանից, 8 մասից և քարտեզների ու նկարների ցանկից: Հեղինակն իր ներածականում գրում է. «Այս հրատարակության գլխավորապես նպատակը եղած է հայ մշակույթին ծառայություն մը մատուցանել ու նաև հավերժացնել Ամասիոն և գավառակներուն՝ 1915 չարաշուք թվականը կանխող հայ ժողովուրդին անմոռաց հիշատակը»: Գրքի առաջին մասում պատմական ընդհանուր տեսությամբ Սիմոնյանը անդրադառնում է Ամասիայի վարչական բաժանման, բնակչության լեզվի և պատմության հարցերին: Առանձին գլխով տալիս է «Տանիշմենտնամե» թուրքական հին ձեռագրի քննական ուսումնասիրությունը: Գրքի երկրորդ մասում հեղինակը հաղորդում է հնախոսական, տեղագրական, բժշկական, եկեղեցական-պատմական տեղեկություններ գավառի մասին, իսկ երկրորդ մասում խոսվում է

Ամասիայի մշակութային ընկերությունների, կուսակցությունների, գերմանա-ֆրանսիական գաղութների, հայ կաթոլիկ-բողոքական համայնքների և տնտեսական ու առօրյա կյանքի հարցերի մասին: Գրքի չորրորդ մասում հեղինակը մեծ գաղնությամբ խոսում է 1915 թ. եղեռնի և բնակչության տեղահանման, ջարդերի մասին, սկսած 1895 թ. մինչև 1915 թ., բերելով բազմաթիվ փաստաթղթեր ու տվյալներ: Հինգերորդ մասի Ա գլխի թեման է՝ «Եղեռնից վերապրողներ Ամասիայում և այլուր», իսկ Բ գլխում պատմական ակնարկի ձևով հեղինակը խոսում է սփյուռքի կյանքի, հայրենակցական միությունների և մանավանդ Ամասիայի հայրենակիցների մասին: Գրքի վեցերորդ մասը կազմում է գրական բաժինը, ուր զետեղված են նյութեր Ամասիայի հայ կնոջ, մայրության, ընտանիքի և անցյալի հուշերի վերաբերյալ, իսկ յոթերորդ մասը ազգագրականն է, որտեղ հեղինակը պատմում է բարձրի ու սովորությունների, ընտանեկան և գավառական կյանքի մասին: Վերջին՝ ութերորդ մասը հատկացված է Ամասիայի բարբառին: Գրքի վերջում կա օտար բառերի բառարան:

Պ. ՍԱՐԱՋՅԱՆ